Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 570 — ՀԱՅԻՐ 19/2 ՅՈՒՆԻՍ 1911 — ԿԻՐԱԿԻ

طاشينك
امتيجه يومى غزت
صاحبه: هرند مامورليان: ازمير

" TACHINK "
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN POLITIQUE & LITTÉRAIRE
Imprimerie Mamourian
SMYRNE

ԱՕ ՓԱՐԱ

ԴԱՇԻՆՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

	ՏԱՐԻ	վեց.	ԵՒ.
ՀԱՅԻՐ	80	40	20 Ղ.
ՊՕԼԻՍ ԵՒ ԳԱՒԱՌ	80	40 Ղ.	
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	25	13 Ֆր.	

Նամակներ պէտք է ուղղել՝ Խմբագր. «ԴԱՇԻՆՔ»-ի
Մամուրեան Տպարան — Իզմիր
Rédaction du journal Arménien «TACHINK»
Imp. Mamourian — Smyrne

Չի հրատարակուած ձեռագիրները չեն վերադարձուիր

ԱՕ ՓԱՐԱ

Նոր Մեթոս Իրագիտութիւն Ազգ. ժողովին Մէջ

Առանց այլեւայլի պէտք է չնորհաւորել Ատամպօլուեան էֆէնտին այն չատ գնդեցիկ գերին համար, զոր առանձնած է Միութեան կամուրջ ըլլալու Ազգ. ժողովին երկու կուսակցութեանց միջեւ։ Մեթոտին հզօրնակը ինքն է միայն, տպագրութեան իրաւունքը վերապահուած իրեն։ Բոլորովին նոր ոճով խորհրդարանական իրագիտութիւն մը, որուն տարերքը կը կազմեն անվերապահ ընթացք մը, յանդիմանական կորովի չեչտ մը կեդրոնին դէմ, անոյշ և համակիր վերաբերում մը ամէն բանի և ամէն անձի հանդէպ, որ Ընդդիմադիր կամ Ազատական կը րուբէ։ Շնորհաւորեցէ՛ք ուրեմն Ատամպօլուեան էֆէնտին, որ երկու հաւուաձաներուն մին չեւ ցարդ անվերածելի ըլլալուն բոլոր անպատեհութիւնները կ'աչիւտի փճացնել իր նոր մէթոտ վարժունքին աորուչանին մէջ։ Միութեան կամ Ճուլման աչիւտաորները, —բոլոր դէպքերը ցոյց կուտան, —կը զիտեն նաև իրենց անձնական կամ պաշտօնական յաջողութիւնը։ Ատամպօլուեան էֆէնտի, իր երկու նախորդներուն պատմութիւնը մտածէն կամ հետաքրքրով, չատ մեծ յոգնութեամբ պատրաստեց իր չաապասութեան նոր մէթոտը, որուն համեմատ սկզբունք դրաւ իրեն նախ հակել Ընդդիմադիրներուն, ինչ որ ալ ըլլայ խնդիրը, և ատոր հետեւանքով բնականաբար նեղացողի դեր մը առնել կեդրոնին դէմ, ամէն առթիւ պռանգութիւն մը ցոյց տալ կեդրոնէն բխած ատաջարկութեան մը դէմ, մինչև իսկ յանդիմանել կեդրոնը։ Կամուրջ ձգելու իր գժատար աչխատութեան միջոցին Ատամպօլուեան էֆէնտի այսպէս տակաւ առ տակաւ, կը խորտակէ կրծանուած ատաղձները, փրաձած ամուր երկաթները, և անոնց ձանրութեան տակ կը մտնէ բոլորովին նոր նիւթեր դնելու և կամուրջին խարիսխները անոնցմով հաստատելու համար։ Եւ ատոր համար ալ ունի կորովի ուսեր և յան կռնակ։ Շնորհաւորելի է ատանկ մարդ մը մեր ներկայ անտեսութեան մէջ։ Բարի յաջողութիւն։

Բայց այդ մէթոտին կիրարկութեան միջոցին լաւ չէ արդ! օք որ Ատամպօլեան էֆէնտի քիչ մը նաւազ անվերապահ ըլլայ, կամուրջին չափանիշները հաւատար ուղղութեամբ տնկէ, ուղիղ գործ մէջտեղ հանելու համար։ Այդքան քրտնաթոր աչխատութիւն մը հիմ ձնուելդ տալ ծուռ չինուած կամուրջի մը, մեզք կըլլայ թէ աչիւտողին և թէ գործածած նիւթերուն։

Ատամպօլեան նոր մէթոտ իրագիտութեան տեսականէն անցնելով գործնականին, կը տեսնենք որ այդ գաղափարով մը միայն չինուած է,— կանոնները բնաւ բացատրութիւն չունին,— խոժոռ տրամաբանութիւն մը, իրրեւ անվերապահում մը, նոր նախապայման մը նոր մէթոտին օգտակարութեան մասին լեցուցած են հղինակին ուղեղը, ան տարիներ առաջ մանկավարժը բնաւ հաչիւ չառներ ուսանողին յարմարութիւնները, անոր տարիքը մարտնիթեան աստիճանները, բնաւ չանգրտաոնար փաղաւած մը ընելու պռնկ, բանաւոր ափիփութիւմ մը դնելու ամէն գործի հետ, — ինչ որ նոր ոճով գաղափարները կ'ընեն։ Ատամպօլուեան էֆէնտի Ազգ. ժողովին մէջ Ինութեան իրեն պարգեւած ազատ գէմքը մինչև իսկ կը գանայ կեդրոնին, — ինչպէս իր ատաջ գիտել տուած էր Ազգ. Երեսփոխան մը, — քէն ըրեր է առաջին վայրկեանին իսկ կեդրոնին դէմ, երեսը, ձեռքերը, սիրտը և ատամքսը ընդդիմադիրներուն տուած է, անդին ինչ կը մնայ իրէ կեդրոնին համար .... Պիտի բակ որ մարդը իր կռնակն ալ կեդրոնին տուեր է, (ապրիս ...) չէ մի որ ամենէն կարևոր մասն է բեռներուն համար, անհոգ եղիք, — ըսել կ'ուզէ, — դուք իմ կռնակս էք, կամ կռնակս ձերն է, արդեօք։ Բայց ինչ կըլլայ, երբեմն սանկ երեսդ ալ ցոյց տուր, մանաւանդ մի՛ այնքան պնդութեամբ յանդիմաներ կռնակիդ կողմը նստողները։ Ուրբաթ օր Ատամպօլուեան էֆ. կեդրոնի երեսփոխան Տօքթ. Թէրզեանի հանդէպ ա՛յնպիսի վարմունք մը ունեցաւ որ մեր կարծիքով իրեն չափ ուշիմ ու չրջահայեաց Ատենապետի մը համբաւը թոցնող անձի մը անպատեհ էր։ Տօքթ. Թէրզեան ներկայացուած հարցին առթիւ քանի մը թեկուզ բութիւններ ըրաւ վարչութեան, չատ մեղմ ու ցաւած չեչտերով։ Ատամպօլուեան էֆ. յանկարծ կիրարկեց գործելու իր նոր մէթոտին չգնազութիւնը, և խանգարեց երեսփոխանը, ան չափ ու չարժ. մ կտրած Ընդդիմադիրներուն կողմը, որոնք իրենց նորատնակ ազատագործին այժ կուտային, օգանչանալով նորամուտին ձարատութեան վրայ։ Միևնոյն տեսարանը գործեալ Թէքէեան էֆէնտիի հանդէպ. Ընդդիմադիրներուն քրիչներուն միջև։ Բարի յաջողութիւն։

Բայց այս տողերը գրիչ առած կը կարդան կրկին Ֆրանսացի աչիւարհահռչակ հղինակ մը, որուն սա տողերուն վրայ ընթերցումս վերջացուցի։ — Այն մարդիկ, որոնք անգամ մը կարող եղած են ազնիւ, դիւցազնական գործ մը կատարելու, որուն հոչակը տարածուած է բոլոր երկիրին մէջ, պարտաւոր են որ զրնէ իրենց մնացեալ կեանքին մէջ ոչնչութեան մէջ ոչնչանալ ա՛յլ խոնարհ ու աչքաթող վարմունքի՝ որ տովորական մարդոց մէջ իսկ. կը դիտուի, եւ ատով իրենի գիրենի մեծ ճիգերէ վերջ սպառած ալ ցոյց չեն տար։ Պէտ չի որ անոնի իրենց ստացած յարձր հմտութեան անարժան պզտիկութիւններու մէջ, եւ ժողովուրդին սեչ նուազ խառնուելով, եւ գիրենի... doskh shalenu պատճառութիւն չեսալով անոր, հեռաֆրերութենի եւ հիւացուածք եսմ չփոխանցնելն գայն անտարբերութեան, եւ բերաս արհամարհանքի։

Ամէն պարագայի մէջ, այս գեղեցիկ տողերուն հղինակը չատերէն, մինչև իսկ Ատամպօլուեան էֆէնտիէն աւելի նչանաւոր է, տաղի վոքածաու է։ Այնպէս որ վարչութեան Ատենապետին նոր մէթոտով իրագիտութիւնը ինչ առաւելութիւններ ալ ունենայ, ընկերային գիտութեան համար կ'արժէ առաջնորդ աշնենալ վերոյիչեալ տողերը, և ի հարկին կիրարկել պատնէշ — եթէ հնար է — Դալաթիոյ մեր խորհրդարանական և վարչական կեանքին մէջ ալ։ Տեսէ՛ք, նոյն ընկերաբանը փիչ մը վարը ինչ կ'ըսէ. — Մարդոց հետ գործ ունեցող դիտուի և հազար առաքինութիւններով ճոխացած ըլլալ իր սէկ թերութիւնը։ Յաճախ ա՛յնիսկ դժբախտ են որ այդ թերութիւնը կամ մոլութիւնը—իրենց վիճակին ու դիրքին վերջին ծայր անպատչաճ է, եւ որ կրնայ միևնոյն իսկ ծարելի ընել գինքը ուրիչներուն աչքին։ կը տկարացնի իրենց մեծ յարեւոնութեանց փայլը, արգելք կ'ըլլայ անոնց կատարեալ վարդիկ ըլլալուն եւ անոնց հետքերին ամբողջանալուն։

Իրենցմէ չի պահանջուիր որ աչխոյժ ու առոյգ եւ աւելի անաղարտ ըլլան, ուրիշներէն աւելի իրրեւ թէ բարեկամ կարգապահութեան, աւելի հետաքրքիր իրենց պարտքերուն, աւելի նախանձաւոր հետաքրքիրի բարօրութեան համար, կամ աւելի չուրջ, այլ այդպիսիներէն կը պահանջուի միայն որ սա կամ նա ձեռին, մեքոտին ծայրացեղ սիրահարներ չըլլան եւ ... իրենք իրենցմով չգեցուին։

Յիրանացի հղինակը պատասխանէ՝ մեծ իչխանները, անուանի գործավարները հասցէին ուղղած է այս ոսկեղինիկ խօսքերը, որոնք աստիճանի եւ էչխներով կը պատչաճին ամէն կարգէ, ամէն դասէ անհատներու, մինչև իսկ խորհրդարանական կեանքի մէջ նոր համբաւի հետաքրքիր խանդավառ ցուցամոլիներու, և վարչական իրագիտութեան նոր մէթոտ հղինակներու։

ԵՐԵՄԻՈՒՆ ՄԸ

Կ. Պոլիս, 11 Յունիս 1911

ԽՆԴԻՐԱՆՔ ՄԸ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՆՆՈՐՀԱՒԱՔԱՐԻ Տ. Տ. ՍԱՀԱԿ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ

Երեկուան օր կարդացի Կ. Պոլսոյ «Բիւզանդիոն» պատմական Հայաթերթի 4456 թուոյն մէջ, թէ Զերզ Ս. Վեհափառութիւնը, այս անգամ կնաբարեպաշտութեան միջոցին, այցելած է նաև Կիւտարիոյ Ս. Կարապետի Վանքը, և աղօթած է արտատուլից Ս. Յակոբեան Մկրտչի Եկեղեցիին մէջ։

Թէ՛ վանքին ամբողջ կոմիտէն, և թէ նոր Վարժարանը այցելելով, հիացած է իմ գործունէութեան վրայ, և յատկապէս ալ Ձեր Բանկագին գնահատութիւնը չէ՛ք զլացած, կնաբարեպէն եկած հրատիրանքս ներկայացնելու, ինձ անուանելով Շինող Տուն։

Արդէն ու անկէց չնորհակալութիւնս յայտնելով հանդերձ, Ձերդ Վեհափառութեան այդ գնահատութեան համար, կը զգամ նաև անկեղծօրէն բսել ու խոստովանիլ, թէ ես ապիկար ու անկարող, երբեք այդպիսի անուան արժանի մէկը չեմ, կնաբարեպ մէջ մանաւանդ ես ալ կրսեր, թէ այժմ այդպիսի գործունէութիւնէ և չինութիւնէ չ'ը և կարևորութիւն չ'ունին, մանաւանդ վարժարանը և յարակից չէնքերը, ինչպէս կ'ը սեն, հակառողջական, խնամ և մութ են գրս ի հարկէ տեսած պիտի ըլլաք։

Ձեր Վեհափառութեան այդ գնահատութեան վրայ, գուցէ կրկին հայտնուիմ ենթարկութեամբ, հետևարար պիտի խնդրեմ և ազաչանօք պիտի հայցեմ, թէ ու՛ր որ ալ գտնուիք, և ո՛ւր որ ալ ըլլաք, յուսութեամբ անցնիք, այդ տնարմէք և անկարևոր գործերուն վրայէն. կուզեմ և կը փափաքիմ որ իմ անունս մոռցուի այդպիսի գործունէութեանց մասին։

Ընդունեցէք, կ'ազաչեմ, իմ այս իրնդրանք ու ազաչանքս։

ՏՐԴԱՏ ԵՊՍ. ՊԱԼԵԱՆ

Զմիւռնիա, 17 Յունիս 1911

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

«ԴԱՇԻՆՔ»-ի Նիւ-Յօրք գործակալն է Տիար Մկրտիչ Գալուստեան՝ որուն կրնան դիմել բաժանորդագրութիւն փոփոխութեան, ինչպէս նաև վճարել իրենց բաժանորդագինները։

ՏՕՔՏ. ՏԻԳՐԱՆ ՍՊԱՐԴԱԼԻ

Տօք. Տիգրան Սպարթալի Իզմիրի բժշկական դասուն աւելեն կարևոռուն դէմքը. ինչպէս յայտնի է Իզմիրի հասարակութեան, դարմանատուն մը (clinique) հաստատած է Հայկական բասաժին վերի յարկը, ուր կ'ընդունի հիւանդներ եւ կը կատարէ աւելն տեսակ վիրաբուժական գործողութիւններ։

Տօք. Տիգրան Սպարթալիի այցելել փափաղող պիտի կրնան գտնել զինք կանոնաւորապես ամեն օր առաւօտ 9—12.30 և կ. ե. ժ. 3.30—5.30 իր հիւանդին։

25—16

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳՈՐԾԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԿԵՆՏՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻ

ՆԻՍՏ Ա.

Կեդրոնական վարչութիւնս իր առաջին նիստը գումարեց Յունիս 4ի կիրակիին, Պօսթընի մէջ, հրաւիրեալ կեդրոնական Վարչական Դիւանին, Տ. Սերովբէ Քհնյ. Ներչապետ, Առենապետ Կրօնական ժողովի. Տիար Մաղաք Գ. Պէրպէրեան, Առենադպիր Տնտեսական ժողովի, որք կը կազմեն դիւանը Ամ. Հոչ. 43ի համաձայն)։

Ժողովը բացուեցաւ կէսօրէ ետք ժամը 3ին, առենապետութեամբ Տ. Սերովբէ Քհնյ. Ներչապետի և հետեւեալ անդամոց ներկայութեամբ.—

Սրժ. Տ. Սարգիս Քհնյ. Թաչճեան, Տ. Մատթէոս Քհնյ. Մանիկեան, (1) Տիարք Տօքթ. Փ. Ագաստեան. Մաղաք Գ. Պէրպէրեան, Վէտրզ Պ. Թովմասեան, Սարգիս Աչըգպաչեան և Գէորգ Տէր Մաղաքեան։ Ժողովէն բացակայ էին Սրժ. Տ. Գաբրիէլ Վրդ. Դաֆթարեան և Տ. Յակոբ Քհնյ. Բարիջանեան։

Ժողովս նկատի առնելով թէ՝ ըստ Սահմանադրութեան 44րդ Յօդուածին կրօն. ժողովը և Տնտեսական ժողովը իրենք իրենց մէջ մեծամասնութիւն կը կազմեն, նիստը օրինաւոր հոչակելով հետեւեալ օրակարգը քննարկեց.

ՕՐԱԿԻՒԳ

Ա. Գեր. Տ. Մուշեղ Եպ. Սերովբեանի հրաժարականի խնդիրը։

Բ. Առաջնորդական Տեղապահ ընտրելու խնդիր։

Գ. Կրօն. ժողովի յայտարարութեան խնդիր և լուծում հարցերու։

Ա. — Մուշեղ Եպ ի պատճառաբանեալ հրաժարականին վրայ ժողովը թեր ու դէմ կարծեաց փոխանակութենէ յետոյ՝ տեսնելով թէ կ. վարչութեան ներկայ հոգևոր անդամները Սրբազանի հրաժարականին միացեալ կէտերը նկատողութեան առնելու բացարձակ պայման կ'առաջարկեն անոր մէջ հոգևորականներու հասցէին յիշուած նախատաքսութեան յետս կոչումը, և երբ ժողովի անդամոց մեծամասնութեան կողմէն իրենց դիտել տրուեցաւ, թէ բացատրութիւնները արդէն իսկ յարգուած են, նամանաւանդ առիկա արդար

(1) Այս այն քահանան է որ Գատապարտի վրայ ձեռնադրուեցաւ և անկէ վտարուեցաւ, այժմ Ամերիկա կ'գտնուի և օրուան ժարդը կ'ըլլայ, երեւակայեցէ՛ք այս չնորհազրկին գտակով, Իզմիրցիին ծանօթ, միւս քահանաներու արժէքը....

Տ Ա.

ԵՒԼԻՔ ԵՒ ՎԱՂԱՅ

ՊՈՒՏԻԼ ՀԱՅՈՑ

ՀԱՏՈՐ ՄԱՐՏԻՆՈՍԵԱՆ

Ը.

— Ինչպէս կ՚ուզէք, պարոն Ռուբէն, ես ձեզ կ՚ազատեմ ամէն տեսակ հոգսերէ, ես ձեզ կ՚ապահովեմ ամէն տեսակ հարստութիւն, ես ձեզ կ՚ապահովեմ ամէն տեսակ երջանկութիւն, միայն թէ դուք ինծի տաք ձեր սիրտը, ձեր հոգին, ձեր կեանքը, ձեր ամբողջ էութիւնը, ձեր ամբողջ գոյութիւնը, ձեր ամբողջ անձը, ձեր ամբողջ ներկան եւ ապագան, ձեր ամբողջ անցեալ

Տեղական Լուրեր

ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ և քաղաքիս Իտալական հիւպատոսարանին միջև դիւանագիտական ինդիր մը առաջ եկած է Ֆալազ Ալպանացի Ինայէթի զէպքին համար որ տեղի ունեցած էր անցեալ օր Պիլմ բազար, ինչպես կը յիշեն ընթերցողները, Կուսակալութեան եղած բուռն բողոքներէն և զոհացումի պահանջումէն յետոյ, Իտալական ընդհ. հիւպատոսը խընդիրը հեռագրեց գեսպանատուն, հրահանգ սպասելով։ Նախընթաց օր հիւպատոսարան հրաւիրուեցան քաղաքիս Իտալական գաղութին երեւելիներն, որոնք խորհրդակցութիւն կատարեցին ընդհ. հիւպատոս Պ. Սիփէլլիի հետ տեղի ունեցած նախատինքին համար։ Երէկուան «Ռէֆորմ» կը գրէ թէ Պ. Սիփէլլի իտալահպատակներու հետ ըրած խորհրդակցութեան համաձայն, յայտնեց որ եթէ իրեն կատարեալ գոհացում չի տրուի, Իզմիրէն պիտի մեկնի հիւպատոսարանի բոլոր պաշտօնեաներուն հետ միասին։

«ՌԷՖՕՐՄԻ» կը գրէ թէ որ վհատեւ Իզմիրի Մալախորչի ընկերութեան պաշտօնեաներուն պահանջումովը Թօչակներու վրայ յաւելում մը եղաւ, ուստի չոգենաւային վարչութիւնը տոմսակներու գիները կուզէ բարձրացնել, իր ծախքերը զոհելու համար։ Թուրք մերթը կ'ըսէ նաև որ, թէ Դօրտէյլոյի և թէ ուրիշ արուարձաններու բնակիչները կը մտադրեն գործադուլ հրատարակել ընկերութեան դէմ, եթէ երթեք ասիկա իւ գործ դնէ իր որոշումը։

ԲԻԶԱՆԴԱԿԱՆ մերթէ մը կ'իմանանք թէ վհտ. Սուլթանին Իզմիր ընթիք ուղեւորութիւնը զեռ վերջնական որոշման մը չի յանգեցաւ։ Միայն պարզ խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ այս ուղեւորութեան մասին, իսկ պաշտօնական որոշումն կարելի է որ աւելի ուշ տրուի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ հեռագրի մը համաձայն, մերիկ մը տեղի ունեցեր է Կեռարիոյ մէջ։ Զուրի ուժգին հեղեղներ 18 տուներ քանդին։

ԲԻՕՒՒՀԵՄԻՆ կը հեռագրեն թէ տեղւոյն քաղաքապետը քոլերայէ մեռեր է։

ԻԶՄԻՐԻ երեսփոխաններէն Կ. Էմմա Նուխիմ ուրբաթ օր Մաղնեսիա և Պեր կամա մեկնեցաւ։

ԱԳ-ՔԼՕՒԻ աւազակային դէպքին վրայ Դուշ-Առային «Ամալթիա»ին ղրկուած մէկ գրութիւնը կը գնենք հոս մեր ընթերցողաց առջև թարգմանաբար։ Դուր էն եկող ուղեւորները կը հաստատեն թէ 4 օր առաջ 6 աւազակներ, ճիշդ արեւամուտին Ագ-Քլօյի մօտ գտնուող իր ագարակէն լեռը տարին Քլրլաքօ Սիրէօղլուն, որմէ մեծ վրկանք մը պահանջեցին։

Կ'ըսեն թէ այս աւազակները ռուսահպատակներ են մաքսանենգ Ազնիվանի հայ քիայի առաջնորդութեամբ տակ։

Դուշառայի Գայմագամութիւնը Իզմիրի չոգենաւով ոստիկան-զինուորներ ղրկեց, հսկողութիւն ընելու համար Ագ-Քլօյի ծովեզերեայ կողմերը։ Այսու ամենայնիւ կը տարաձայնուի թէ աւազակներն մեր կուսակալութեան սահմանէն դուրս տարած են առեւանգեալը և հոնկէ, ինչպես կ'երեւի

նալ և հոն տեղեկութիւն հարցնել։»

Մինչդեռ կառքը կ'իջնէր Արք ոը լ'Իթուալի և արտաքին ծառուղիներու միջև, Քէօ Թուալեանի կարգով կարգաց երկու նամակները։ Առաջին նամակին թուղթը ժոլչագոյն և հասարակ տեսակէ էր և կը կրէր Մ. Գ. սկզբնատառերը, այս թուղթէն էր որ կը գործածէր Մաքսանս։ Միւս նամակին թուղթը գծաւոր էր՝ առանց նամակագլխի, և չորսի ծալուած։ Առաջին նամակը կրկէր.

«Հիզի ագարակ» 8 հոկտ.

«Տիկին.

«Երկու օրէն Հիզի ագարակէն մեկնելու ստիպուած ըլլալով, կուգամ չնորհակալութիւնս յայտնել ձեզ այն ընդունելութեան համար զոր հաճեցաք բնել ինձի անցեալ ուրբաթ՝ զղեակին մէջ։ Ան օրը չափազանց վախ զգայի բացատրելու համար ամէն ինչ որ միտքս ղրած էի ըսել ձեզի, միւս կողմէն բարեկամիս ներկայութիւնը կը նեղէր զիս։ Դուք ա՛յնչափ բարի և ա՛յնչափ զթասիրտ էք որ չեմ վարանիր ձեր առջև պարզելու իմ տիւրը կացութիւնս որ արդէն ծանօթ է ձեզի։ Ձիս հալածող ձախորդութիւնը ի դերև հանից այն կարգադրութիւնները որոնց վրայ յոյս զնելու իրաւունք ունէի զործ մը ձեռք բերելու համար։ Կինս և ես յուսին կարօտութեան մէջ կը գտնուինք։ Ինչ որ ձեր վիհատնձն սիրտը հաճի չնորհել ինձի՝ մեր փրկութիւնը պիտի ըլլայ, և կրնաք հաւատալ ձեզի ինչպես նաև ձեր ամուսնոյն հանդէպ ունեցած բացարձակ երախտագիտութեանս և հաւատարիմ անձնուիրութեանս։

«Հաճեցէք, Տիկին, ընդունիլ չնորհակալութիւնները և մեծարանաց հաւատիքը ձեզ յարգող և խոնարհ ծառային։

«ԳՈՒՍՏԻՆՔ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՔ
ՍՏԵՓԱՆ ԻՓԼԻՔՃԵԱՆ

Ըսինք, դարձեալ կը կրկնենք, ձեր օգուտին համար է, Պարոններ, Տիկիններ և Օրիորդներ։

Ցրանկաց Թաղի վաճառատունը 15 օրէն պիտի փոխադրուի կեդրոնական մեծ վաճառատունը Ա.յի Ծօրկի փողոց, հետևաբար անօրինակ զեղչով մըն է որ կը ծախուին այժմ ամեն տեսակ ապրանքներ։

Ա.յս իրական և ա՛չ երևակայական զեղչէն եթէ այժմ օգտուիլ չգիտնաք ըսել է, բնա՛ւ չէք ճանչնար ձեր չահր և օգուտը։

Ապացոյցներ եթէ կուզէք, Ջայցելեցէք վաճառատունը։ Ձեր անձնական չահն է զոր կը պահանջէ։

Ծախուած 13,000 պարկ, մնացած 700 պարկ։

Գիները.—

Երլի	14—17½ ղրչ. քիլէն
Ուչաք	15—16½
Պիկարէ	13—14

ԲԱԿԼԱՅ

Հասած 5300 պարկ.
Ծախուած 2800
Մնացած 3000
Գինը. — 36½ փարայ օխան։

ԲԱՄՊԱԿ

Ծախուած 300 պալիա, Երլի 480—500 ղրչ. կենդ.

ԲԱՄՊԱԿԻ ԿՈՒՏ

23—24 փարայ օխան,

ՍՈՒՍԱՄ

116—124 փարայ օխան,

ՏԱՐԸ

Ձերմակ՝ 56—60 փարայ օխան։

ՀԵՌԱԳԻՐ

Կ. ՊՈԼԻՍ Յունիս 19.— Առաւօտուն արտասովոր նախարարական խորհուրդ մը տեղի ունեցաւ որ 3 ժամ տևեց։

ՆՈՅՆ.— Նախարարաց Խորհուրդը զլխաւորապէս Ալպանական խնդիրով զբաղեցաւ, որուն համար կարևոր որոշումներ տրուեցան։ Այսպէս, Պատերազմական Նախարարին առաջարկութեամբ վերջնականապէս որոշուեցաւ որ Ալպանիոյ բանակին պահ Թուրկուտ փաչա եա կանչուի իր անրաւականութեանը պատճառով։

ՆՈՅՆ.— Բուռն խորհրդակցութենէ մը եաք, վերջապէս Շեվքէթ փաչային կարծիքը յաղթեց։

Շեվքէթ փաչա ի նպաստ պատերազմի խօսեցաւ Գարաւոզի դէմ, ինչպես նաև պնդեց ամէն զոհողութեամբ Ալպանները առանց պայմանի հնազանդութեան բերելու մասին։

ՆՈՅՆ.— Կը հաստատուի տեղւոյս քաղաքական չրջանակներուն կողմէ թէ Թուրկուտ փաչային տեղ Թրքո-Գարատաղեան սահմանագլուխը պիտի երթայ Պատերազմական Նախարար Մահմուտ Շեվքէթ փաչա՝ լիազօր իշխանութեամբ։

ՆՈՅՆ.— Նախարարաց խորհուրդին աւարտումէն յետոյ, Անգլիոյ երկար հեռագիրներ քաչեց, ինչպես նաև Մակեդոնիոյ բանակին սպաներուն։ Կրուելի թէ ուրիշ զօրավարներ ալ պիտի զրկուին Ալպանիա։

«Ց. Գ.— եթէ նպաստաւոր պատասխան մը ունիք, կ'աղաչեմ հաճեցէք զրկել զայն Հիզի ագարակը՝ կրկնակ պահարանով արտաքին պահարանը Տիկ. Բրէթիէնի հասցէով։»

Այս նամակը գրուած էր բանական համարձակ գիրով մը, առանց քերթուածքի և առանց բիծի։ Բայց այսպէս չէր նկրտող նամակը որուն վրայ յայտնապէս կ'երեւէին չարաղրուած տեղին անկարգութեան նշանները։ Մկրանի ցայտուկներ, սուրճի գաւաթի մը յատակին կրած նշաններ կևրևնային անոր վրայ. գողոջուն ձեռքով գրուած գիր մըն էր. քանի մը բառեր կիսատուռտ մնացած էին, իրր թէ գրիչը բռնող մատները յանկարծ կորտնցուցած ըլլային իրենց ուժը

(Շարունակելի)

ՄԱՐԴԱՍՊԱՆ ԱՂՈՒՆԻ ՀԱՅԿԱԶՆ ՈՒ ՀՈՍ ՏԵՂԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՐՑՆԵԼ։»

Մինչդեռ կառքը կ'իջնէր Արք ոը լ'Իթուալի և արտաքին ծառուղիներու միջև, Քէօ Թուալեանի կարգով կարգաց երկու նամակները։ Առաջին նամակին թուղթը ժոլչագոյն և հասարակ տեսակէ էր և կը կրէր Մ. Գ. սկզբնատառերը, այս թուղթէն էր որ կը գործածէր Մաքսանս։ Միւս նամակին թուղթը գծաւոր էր՝ առանց նամակագլխի, և չորսի ծալուած։ Առաջին նամակը կրկէր.

«Հիզի ագարակ» 8 հոկտ.

«Տիկին.

«Երկու օրէն Հիզի ագարակէն մեկնելու ստիպուած ըլլալով, կուգամ չնորհակալութիւնս յայտնել ձեզ այն ընդունելութեան համար զոր հաճեցաք բնել ինձի անցեալ ուրբաթ՝ զղեակին մէջ։ Ան օրը չափազանց վախ զգայի բացատրելու համար ամէն ինչ որ միտքս ղրած էի ըսել ձեզի, միւս կողմէն բարեկամիս ներկայութիւնը կը նեղէր զիս։ Դուք ա՛յնչափ բարի և ա՛յնչափ զթասիրտ էք որ չեմ վարանիր ձեր առջև պարզելու իմ տիւրը կացութիւնս որ արդէն ծանօթ է ձեզի։ Ձիս հալածող ձախորդութիւնը ի դերև հանից այն կարգադրութիւնները որոնց վրայ յոյս զնելու իրաւունք ունէի զործ մը ձեռք բերելու համար։ Կինս և ես յուսին կարօտութեան մէջ կը գտնուինք։ Ինչ որ ձեր վիհատնձն սիրտը հաճի չնորհել ինձի՝ մեր փրկութիւնը պիտի ըլլայ, և կրնաք հաւատալ ձեզի ինչպես նաև ձեր ամուսնոյն հանդէպ ունեցած բացարձակ երախտագիտութեանս և հաւատարիմ անձնուիրութեանս։

«Հաճեցէք, Տիկին, ընդունիլ չնորհակալութիւնները և մեծարանաց հաւատիքը ձեզ յարգող և խոնարհ ծառային։

«ԳՈՒՍՏԻՆՔ

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԲԱՃԻՆ

18 ՅՈՒՆԻՍ 1911

ԱՖԻՕՆ

Հրապարակը ամայի է և գիները կը բարձրանան։ Այս չաբթուան մէջ ծախուեցաւ 169 կողով զանազան տեսակներ 150—200 ղրչ. չեքին։

Մինչև այսօր հասած է քաղաքս 82 կողով, անցեալ տարի նոյն թուականին եկած էր 172 կողով։

ԲԱԼԱՄՈՒՏ

12,500 կենդինար ապրանք ծախուեցաւ հետևեալ կերպով.

Համբարձումեան	3000 կենդ.	46—65 ղրչ.
Պարրի	2100	41—57
Վիլհօլ	2000	54—62
Էլմասեան	1800	42—65
Յովսեփա	1000	44—60
Աօս. Հոնկրուազ	950	47—60
Ֆիլիբոյչի	550	62—63
Էլիկդէր	500	50—58
Բրաուէր	470	57—65
Հոնիչէր	150	52—

Հրապարակը միշտ ամայի կը մնայ։

ՁԱՄԻՋ

Առդքանին.— Քանի մը փոքր գործեր եղան միջին տեսակներու վրայ՝ օխան 6—6³⁰/₄₀ ղրչ։

Մեհ Թիհրե ան. 200 պարկի չափ ծախուեցաւ. Զալ 78, կիւնէ 80 ղրչ. կենդ.

Հրապարակը անփոփոխ կը մնայ։

Ուզունճի.—Պատրաստ մնայն 100 կենդինարի չափ։ Գործ չկայ։

ՅՈՐԵՆ

Այս չաբթուան մէջ հասած է 9400 պարկ որու 1700 ւարկը ծախու կողմէ։ Ծախուած է 9400 պարկ։ Պատրաստ կայ 27,000 պարկ.

Գիները.—

Երլի	55—70 փարայ օխան
Մերսին	70—80
Ուչաք	58—84

Հրապարակը թոյլ է։

ԳԱՐԻ

Հասած 12,200 պարկ որու 4000 պարկը Ուչաքի ապրանք։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԳ
ԿՐԹԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կրթասէր ընկերութիւնը որոշած է յաւաքիկայ զպրոցական տարեշրջանէն սկսեալ Մանկապարտէզ մը բանալ Քարափի կողմը, ոչ կղզւոյ հայ ծնողներու դիւրութիւն մը տալու համար։ Ընկերութիւնը սակայն իր այս որոշումը պիտի կրնայ գործադրութեան դնել այն ժամանակ միայն, երբ 25 ծնողներու հաւանութիւնն և ստորագրութիւնն ունենայ ի ձեռին, այս ակնկալած հաւանութիւններն առանալու համար, ընկերութեան անդամներէն ոմանք այժմէն պիտի այցելեն Քարափաբնակ հայերու տուներն ստորագրութիւններ հաւաքելու համար։ 5—3

ՕՍՄ. ԱՅՏԸՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Այտընի երկաթուղւոյ Ընդհ. Տնօրէն Մր. Հ. Պարֆիլտ կ'իմդրէ մեզմէ յանուանցանել թէ իր բացակայութեան ժամանակ երկաթուղւոյ տնօրէնութիւնը պիտի վարէ Մր. Ֆ. Ա. Հոլդօն սկսեալ ներկայ ամսոյս 2էն։

ՊԱՇՏՕՆԵԱՅ ԴՈՒՔՈՒՆ

Դաւառի վաճառատան մը մէջ պաշտօնավարելու համար փորձառու գրագրի մը պէտք կայ, որը պէտք է գիտնայ տոմարակալութիւն, և տեղեակ՝ հայերէնէ զատ նաև Տաճկերէն լեզուի

Դիմել խմբագրատունս. 10—3

ՀՈՂԵՐՈՒ ՎԱՃԱՌՈՒՄ

Ով որ կ'փափաքի Պայազդը եւ անոր շրջակայքը, ինչպես նաեւ ծովեզրի կողմը գեղեցկագոյն դիրքերու վրայ գտնուած Սօղ. Բեհիլաւոյի հողերեն գեսիններ գնել, կրնայ դիմել Պ. Եօրկիոս Սարիքայի, Յունանկաց քով՝ Պաղպարեսմօ խանը։

50—9

THEATRE DE SMYRNE
ՄԻՇԵԼՕՒԶ

Զանազան խոտոր հետաքրքրական ֆիլմերէ զատ նաև Անգլիական ժօրժ Ե. Թագաւորի թաղադրութիւնը, իսկ մօտերս Սրիթհէտի ամենէ նշանաւոր կռիւը։

ՀԱՅԹԱՅԹԻՉՔ ԲՐԻՏ. - ԾՈՎԱԿԱԼՈՒԹԵԱՆ, ՔԻՒՆԱՐՏ ԸՆԿ. ՈՑՅԱԼ ՍԷՏԼ ՍԹԻՄ ԲԱՔԷԹ ՔՈ. ԵՒԼՆ.

Հեռագրական հասցէ
„DUSTERS"
MANCHESTER

ԲՕՏԵՐ
A. B. C. 5րդ Տպագր.
ՈՒԷՍԹԷՐՆ ՒՆՆԻՕՆ
ԼԻՊԷՐՈՒԻ ԵՒ ՄԱՄՆԱԻՈՐ

Ժ. ՍՄԻԹ Հ ԱՐԿՐԷՅՎԱՍ ԵՒ ԸՆԿ. ԼԻՄԻԹԷՏ

ՄԱՆՉՍԹԷՐ

Սքրիպկ Միլս ՀԷՅՏՎՈՒՏ, Քիւթլըր Հիլ Միլս ՃԷՅԼՍՈՒՕՐԹ

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐՔ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՆՋԵՒՈՑՆԵՐՈՒ

Թրքական, պունաւոր, ճերմակ, Քանթէկի
Նաև քաղնիքի և լոգանքի խաւլտաներու
Հանրած անօթ հետևեալ Մարքաներու տեսականներուէրքր

"WORLD WIDE," "O. K.," & „ARCADIAN TOWELS"

ԼՕՆՏՕՆ
115 Fore Street. E. C.

ԿԼԱՋԿՕ
21 Cochrane Street.

ԲԱՐԻԶ
22 bis. Rue de Paradis.

ՊՕՐՏՕ
84 Cours de Tourny.

ՄԱՐՍԷՅԼ
75 Cour Pierre Puget.

ՀԱՄՊՈՒՐԿ
1/3 Gr. Burstah.

ՊՐԷՄԷՆ
Catharinenstrasse.

ՊԷՐԼԻՆ
Konigstrasse *43/4*.

ՎԻԷՆՆԱ
VII I Mariahilferstrasse.

ՄԻԼԱՆ
51 Via Torino.

ԶՈՒՐԻԽ
Bleicherweg *44*

ՄԷԼՊՈՒՐՆ
187 Flinders Lane.

ՍԻՏՆԷՅ
50 York Street.

ՄՕՆՐԷԱԼ
Coristine Buildinge.

ՔԻՆԿՍԹՕՆ (ՃԷՄԱՅԻՔԱ)
Wilson Buildings.

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Իմփրի ներկայացուցիչ Ա. եւ Ա. ՎԱՐՊԵՏԵԱՆ